ՏԵՂԵԿԱՆՔ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

ա) ֆիզիկական կուլտուրա՝ մարդու առողջ ապրելակերպի և ֆիզիկական կատարելագործման համար հասարակության կողմից ստեղծված և օգտագործվող հոգևոր ու նյութական արժեքների ամբողջություն.

բ) ֆիզիկական դաստիարակություն՝ բնակչության առողջության ամրապնդմանը, աշխատունակության բարձրացմանը և երկարակեցությանը, ֆիզիկապես կոփված ու բարոյապես կայուն սերնդի ձևավորմանն ուղղված կազմակերպված գործընթաց.

գ) ֆիզկուլտուրայի շարժում՝ բնակչության ֆիզիկական կուլտուրայի մակարդակի բարձրացմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպատակաուղղված պետական և հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիների գործունեություն.

դ) սպորտ՝ ֆիզիկական կուլտուրայի բաղկացուցիչ մաս, պատմականորեն առաջացած՝ մարդկանց մրցակցական գործունեության և մրցումների նախապատրաստման հատուկ մասնագիտական մարզումների գործընթաց.

ե) Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքական՝ մարզաձևի լավագույն մարզիկներով, մարզիչ-մանկավարժներով, գիտնականներով, բժիշկներով և այլ մասնագետներով համալրված թիմ, որը նախապատրաստվում և Հայաստանի Հանրապետության պետական դրոշի ներքո մասնակցում է միջազգային մարզական միջոցառումներին.

զ) սիրողական սպորտ՝ մարզական զանգվածային գործունեություն, ֆիզիկական դաստիարակության բաղկացուցիչ մաս, ըստ նախասիրության՝ տարբեր մարզաձևերում շնորհալի և հեռանկարային անհատներին ի հայտ բերելու միջոց.

է) պրոֆեսիոնալ սպորտ՝ սպորտի բնագավառում շահույթ հետապնդող գործունեություն, որին մասնակցում են պրոֆեսիոնալ մարզական կազմակերպությունները (լիգաներ, ակումբներ, թիմեր), սպորտը որպես մասնագիտություն ընտրած մարզիկները.

ը) օլիմպիական շարժում՝ սպորտի զարգացմանը, մարդու հոգևոր և ֆիզիկական կատարելությանը, միջազգային սպորտային փոխհամագործակցությանը նպատակաուղղված հասարակական շարժում.

թ) ֆիզկուլտուրային, մարզական չափորոշիչներ՝ ֆիզիկական վարժությունների համալիր առաջադրանքներ, որոնց կատարման արդյունքներով բացահայտվում են բնակչության տարբեր տարիքային և առողջական խմբերի ֆիզիկական պատրաստականության մակարդակն ու առողջական վիճակը.

ժ) ուսումնամարզական ծրագրեր՝ ֆիզկուլտուրային, մարզական չափորոշիչներին համապատասխան մշակված տարբեր մակարդակների և ուղղվածության ծրագրեր, որոնց հիման վրա կազմակերպվում է ուսումնամարզական գործընթացը.

ժա) մարզիչ-մանկավարժ՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ուսումնական ծրագրով մարզական, մանկավարժական գործունեություն իրականացնող մասնագիտական կրթություն ունեցող անձ.

ժբ) **մարզիկ (մարզուհի)՝** որևէ մարզաձևով կանոնավոր զբաղվող և տվյալ մարզաձևից մարզական կարգ ունեցող անձ.

ժգ) **Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմի~~ հավաքականի թեկնածու՝** Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ տվյալ մարզաձևի առաջատար մարզիկ, որը Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմի~~ հավաքականի թեկնածուի կարգավիճակ է ստացել Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով.

ժդ) **Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմի~~ հավաքականի անդամ՝** Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ տվյալ մարզաձևի գծով աշխարհի, Եվրոպայի, օլիմպիական խաղերի կամ շախմատի համաշխարհային օլիմպիադայի մասնակից մարզիկ.

ժե) **դոպինգ՝** Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով սահմանված հակադոպինգային կանոնների մեկ կամ մի քանի խախտումներ.

ժզ) **հակադոպինգային գործունեություն՝** հակադոպինգային կրթություն և տեղեկատվություն, մարզիկների մրցումային և արտամրցումային դոպինգի ստուգում, սպորտում արգելված նյութերի և մեթոդների օգտագործման

կանխարգելում և հակադոպինգային կանոնակարգերի մշակում և այլ գործունեություն, ինչպես սահմանված են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով և միջազգային չափորոշիչներով.

ժէ) **Հայաստանի Հանրապետության պարալիմպիկ պատվիրակություն՝** Հայաստանի Հանրապետության պարալիմպիկ թիմ, ինչպես նաև պարալիմպիկ խաղերին և Միջազգային պարալիմպիկ կոմիտեի հովանու ներքո անցկացվող այլ միջազգային մարզական միջոցառումներին Հայաստանի պարալիմպիկ թիմի անդամների մասնակցությունն ապահովող՝ Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտեի, Հայաստանի Հանրապետության իշխանության պետական մարմինների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների ներկայացուցիչներ.

ժը) **Հայաստանի պարալիմպիկ թիմ՝** պարալիմպիկ խաղերում և Միջազգային պարալիմպիկ կոմիտեի հովանու ներքո անցկացվող միջազգային այլ մարզական միջոցառումներում Հայաստանի Հանրապետության անունից մասնակցող՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի մարզիկներից (մարզուհիներից), մարզիչներից և այլ մասնագետներից կազմավորված կոլեկտիվ.

ժթ) **Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպություն՝** Հայաստանի Հանրապետության կառավարության ստեղծած կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետությունում հակադոպինգային գործունեություն իրականացնելու համար:

(2-րդ հոդվածը լրաց. 10.06.09 ՀՕ-151-Ն, 10.09.19 ՀՕ-160-Ն, խմբ., լրաց. 01.03.23 ՀՕ-44-Ն)

-Ն)

(09.02.23 ՀՕ-25-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 5. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

ա) բնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումն ու երկարակեցության ապահովումը.

բ) տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիությունը.

գ) հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը.

դ) բարձրակարգ մարզիկների պատրաստումը, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականների և մարզիկների մասնակցության ապահովումը.

ե) պետական ծրագրի միջոցով Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ազգային համակարգի կատարելագործումը.

զ) մարզիկների շրջանում արդար խաղի գաղափարի ամրապնդումը, մրցակցի հանդեպ հարգանքի, ազնիվ վերաբերմունքի ոգով դաստիարակումը, օլիմպիզմի գաղափարների, մարզական էթիկայի կանոնների պահպանումը և սպորտում դոպինգ օգտագործելու, ֆիզիկական և բարոյական կոպտության դեմ պայքարը:

(5-րդ հոդվածը լրաց. 10.06.09 ՀՕ-151-Ն)

Հոդված 6. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական երաշխիքները

Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական երաշխիքներն են՝

ա) ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու, այդ բնագավառը որպես մասնագիտություն ընտրելու, ֆիզկուլտուրային և օլիմպիական շարժմանը մասնակցելու մարդկանց հավասար իրավունքների ապահովումը.

բ) բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովումը, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի պարտադիր դասավանդումն ուսումնական բոլոր հաստատություններում՝ ուսումնառության ամբողջ ընթացքում.

գ) Հայաստանի Հանրապետության առաջնությունների, համահայկական խաղերի անցկացման, օլիմպիական խաղերին, աշխարհի ու Եվրոպայի առաջնություններին, համաշխարհային ունիվերսիադաներին, միջազգային և այլ մրցաշարերին Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականների ու մարզիկների նախապատրաստման և մասնակցության ֆինանսավորումը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին.

դ) աջակցությունը մանկապատանեկան մարզադպրոցների ցանցի ընդլայնմանը, դրանց նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը.

ե) այդ բնագավառի համար կադրերի պատրաստման, վերապատրաստման ապահովումը, բնակչության ֆիզիկական դաստիարակության և բարձրագույն նվաճումների՝ սպորտի հիմնահարցերին վերաբերող գիտական հետազոտությունների նպատակային ֆինանսավորումը.

զ) աջակցությունը ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական և ուսումնական բազաների պահպանմանն ու նպատակային օգտագործմանը, նոր ուսումնամարզական բազաների կառուցմանը.

է) մարզական գույքի արտադրության և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի բնագավառում այլ տնտեսական գործունեության խթանումը.

ը) մարզական գործունեության ընթացքում պրոֆեսիոնալ մարզիկների հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում սոցիալական պաշտպանության ապահովումը:

(6-րդ հոդվածը լրաց. 10.06.09 ՀՕ-151-Ն, փոփ. 07.02.24 ՀՕ-53-Ն)

Հոդված 7. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) հաստատում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության հայեցակարգը.

բ) ***(կետն ուժը կորցրել է 18.04.03 ՀՕ-540-Ն)***

գ) սահմանում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական պատվերի տեղադրման կարգը.

դ) հաստատում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի ակտեր, մասնավորապես զանգվածային սպորտին, բարձրագույն նվաճումների սպորտին և մանկապատանեկան սպորտին առնչվող իրավական ակտեր, այդ թվում՝

դ.1) ֆիզիկական կուլտուրայի կամ սպորտի (պրոֆեսիոնալ ու սիրողական) բնագավառի, այդ թվում՝ մարզական մրցումների (մարզային, հանրապետական և միջազգային մրցաշարերի), ուսումնամարզական հավաքների, ֆիզկուլտուրային-առողջարարական, ադապտիվ կամ մարզական զանգվածային միջոցառումների (պետական բյուջեի միջոցներով) կազմակերպմանն ու անցկացմանը, ինչպես նաև ֆինանսատնտեսական հիմքերի (մասնավորապես մարզիկների կամ մասնակիցների գիշերավարձի և սննդի օրական վճարի, մարզիչների, մրցանակակիրների ու մրցավարների դրամական պարգևատրման չափերի) վերաբերյալ.

դ.2) Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականների կազմում բարձր արդյունքներ ցուցաբերած մարզիկներին և նրանց մարզիչներին անվանական թոշակի հատկացման և թոշակի վճարման չափորոշիչների ու չափերի վերաբերյալ.

դ.3) Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականների գլխավոր և ավագ մարզիչների վարձատրության վերաբերյալ.

դ.4) Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականների կազմերում աշխարհի չեմպիոն, օլիմպիական խաղերի և շախմատի համաշխարհային օլիմպիադայի չեմպիոններ և մրցանակակիրներ դարձած մարզիկների պատվովճարի վճարման կարգի վերաբերյալ.

դ.5) բնագավառում մրցանակներ հիմնելու վերաբերյալ.

դ.6) օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղերում, օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի (նաև օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված սամբո ըմբշամարտ, միջազգային շաշկի, ուշու, կարատե, բիբ-բոքսինգ, մուայթայ -և շախմատ մարզաձևերի~~)~~ աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում (նաև հաշմանդամություն ունեցող անձանց), եվրոպական խաղերում, շախմատի համաշխարհային օլիմպիադայում, Եվրոպայի օլիմպիական երիտասարդական փառատոնում, համաշխարհային ունիվերսիադայում, պատանեկան օլիմպիական խաղերում, շախմատի պատանեկան օլիմպիադայում, Ռազմական սպորտի միջազգային խորհրդի՝ զինվորականների համաշխարհային խաղերում, զինվորականների աշխարհի առաջնություններում, զինվորական ծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց համաշխարհային խաղերում և զինվորական ծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց աշխարհի առաջնություններում 1-3-րդ տեղերը գրաված մարզիկներին, ազգային ~~հավաքական թիմ~~հավաքականների գլխավոր (ավագ) մարզիչներին, մեդալակիր մարզիկների անձնական մարզիչներին, ազգային ~~հավաքական թիմ~~հավաքականների երկրորդ մարզիչներին, բժիշկներին շնորհվող դրամական մրցանակների չափերի ու շնորհման կարգի վերաբերյալ.

դ.7) Հայաստանի Հանրապետության մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչների ու կարգի վերաբերյալ.

դ.8) Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական քաղաքականության հայեցակարգի (ռազմավարության) վերաբերյալ, այդ թվում՝ մարզաձևերի զարգացման հայեցակարգերի (ռազմավարությունների) հաստատման կամ հավանություն տալու վերաբերյալ.

դ.9) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի, հավելավճարների և լրավճարների հաշվարկման և վճարման կարգի վերաբերյալ.

դ.10) ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների նվազագույն

չափորոշիչների վերաբերյալ.

դ.11) Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի պետական հիմնարկների ու Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մարզական կազմակերպությունների աշխատողների պաշտոնային դրույքաչափերին լրավճարներ սահմանելու վերաբերյալ.

դ.12) Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման (այդ թվում՝ առանձին մարզաձևերի զարգացման) ծրագրերի և ծրագրերի իրականացման միջոցառումների վերաբերյալ.

դ.13) մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման վերաբերյալ.

դ.14) Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և այլ հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն պետական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի շարունակական արդիականացման և մարզագույքի բաշխման վերաբերյալ.

դ.15) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքների կազմակերպման, մեթոդաբանական ու բժշկական աջակցության կարգի սահմանման վերաբերյալ.

դ.16) ուսումնական հաստատություններում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի պարտադիր դասավանդման իրականացման կարգի վերաբերյալ.

դ.17) օլիմպիական խաղերին նախապատրաստվելու համար մարզիկներին, ~~հավաքական թիմ~~հավաքականների գլխավոր (ավագ) մարզիչներին, երկրորդ և անձնական մարզիչներին, բժիշկներին ու մերսողներին տրամադրվող սպորտային նպաստի և դրա տրամադրման կարգի վերաբերյալ.

դ.18) պետական բյուջեից մարզական կազմակերպությունների ֆինանսավորման կարգը սահմանելու վերաբերյալ.

դ.19) մարզաառողջարարական (ֆիթնես) մարզասրահներին և լողավազաններին ներկայացվող չափորոշիչները սահմանելու վերաբերյալ.

ե) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ.

զ) սույն հոդվածի «դ» կետով նախատեսված լիազորությունները Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է վերապահել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի լիազոր մարմնին:

(7-րդ հոդվածը փոփ. 18.04.03 ՀՕ-540-Ն, խմբ., լրաց. 10.09.19 ՀՕ-160-Ն, լրաց. 09.02.23 ՀՕ-25-Ն, փոփ. 07.02.24 ՀՕ-53-Ն)

(09.02.23 ՀՕ-25-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Գ Լ ՈՒ Խ 2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 9. Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները

Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմինը՝

ա) իրականացնում է բնագավառի միասնական պետական քաղաքականությունը և զարգացման ռազմավարությունը, ընդունում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի իրավական ակտեր, մասնավորապես զանգվածային սպորտին, բարձրագույն նվաճումների սպորտին և մանկապատանեկան սպորտին առնչվող իրավական ակտեր.

բ) համադասում է պետական և տարեկան ծրագրերի մշակման գործընթացը: Մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում այդ ծրագրերով նախատեսված պետական պատվերների տեղադրման կարգը.

գ) համադասում է բնակչության շրջանում տարվող ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական աշխատանքները, Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականների համալրման գործընթացը.

գ.1) մարզական ենթակառուցվածքների կառավարման ուղղությամբ համագործակցում է մասնավոր ոլորտի հետ՝ պետություն մասնավոր համագործակցության շրջանակներում կնքելով համապատասխան հուշագիր.

դ) շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, այլ մարզական կազմակերպությունների հետ մշակում և հաստատում է ֆիզկուլտուրային, մարզական չափորոշիչները: Մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում ֆիզիկական կուլտուրայի

և սպորտի բնագավառի իրավական ակտերը, մասնավորապես զանգվածային սպորտին, բարձրագույն նվաճումների սպորտին և մանկապատանեկան սպորտին առնչվող իրավական ակտերը, այդ թվում՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետում նշված իրավական ակտերը.

ե) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների հետ կազմում և հաստատում է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների, սովորող երիտասարդության և ուսանողների ֆիզիկական դաստիարակության պետական ծրագրերը.

զ) իրականացնում է այդ բնագավառի գիտամեթոդական ապահովումը, կազմակերպում է ֆիզկուլտուրային կադրերի, այդ թվում՝ մարզիչ-մանկավարժների պատրաստումը և վերապատրաստումը.

զ.1) իրականացնում է մարզաառողջարարական (ֆիթնես) մարզասրահների, անկախ սեփականության ձևից, մարզիչների արտոնագրումը.

է) համագործակցում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի հասարակական կազմակերպությունների հետ.

ը) Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և օլիմպիական մարզաձևերի ազգային ֆեդերացիաների ներկայացմամբ հաստատում է օլիմպիական խաղերի նախապատրաստման քառամյա փուլային ծրագիրը, հանրապետական մարզական և զանգվածային միջոցառումների օրացուցային պլանը.

թ) աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ֆիզկուլտուրային և մարզական ծրագրերի իրականացմանը.

ժ) իր իրավասության սահմաններում կնքում է միջազգային պայմանագրեր.

ժ.1) տարածքային կառավարման մարմինների հետ համատեղ կազմակերպում է ոլորտի տարածքային քաղաքականության իրականացումը.

ժ.2) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի վաստակաշատ անձանց, ինչպես նաև այդ ոլորտում ներդրում ունեցած անձանց առաջարկում է ներկայացնել պետական պարգևների.

ժ.3) մարզիկներին շնորհում է մարզական կոչումներ և կարգեր, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի լավագույն աշխատողներին և կազմակերպություններին, ինչպես նաև այդ ոլորտում ներդրում ունեցած անձանց պարգևատրում է մեդալներով, մրցանակներով, հուշանվերներով և արժեքավոր այլ նվերներով, տալիս է հավաստագրեր.

ժ.4) միջազգային միջոցառումներում առավել բարձր արդյունքների հասած մարզիկներին արժանացնում է «Սպորտի վաստակավոր վարպետ» կոչման.

ժ.5) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի վաստակաշատ անձանց արժանացնում է «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» կոչման.

ժ.6) հաստատում է օտարերկրյա պետություններում կազմակերպվող մրցաշարերին և այլ մարզական միջոցառումներին մասնակցող պատվիրակությունների ոչ մարզիկ ներկայացուցիչների կազմը.

ժ.7) ապահովում է Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպության մասնագիտական անկախությունը և նպաստում դրա համապատասխանությանը «Սպորտում դոպինգի դեմ պայքարի մասին» Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ-ի) հաստատած միջազգային կոնվենցիային, Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքին և միջազգային չափորոշիչներին.

ժ.8) սահմանում է մարզաառողջարարական (ֆիթնես) մարզասրահների, անկախ սեփականության ձևից, մարզիչների արտոնագրման կարգը.

ժա) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

(9-րդ հոդվածը լրաց. 10.06.09 ՀՕ-151-Ն, փոփ. 14.04.11 ՀՕ-88-Ն, լրաց., փոփ., խմբ. 10.09.19 ՀՕ-160-Ն, փոփ. 11.05.20 ՀՕ-263-Ն, խմբ. 01.03.23 ՀՕ-44-Ն, փոփ. 07.02.24 ՀՕ-53-Ն, 28.02.24 ՀՕ-123-Ն)

Հոդված 9.1. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական կառավարման մարմինների լիազորությունները

Առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը՝

ա) օժանդակում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնին մարզական բժշկության կադրերի վերապատրաստման, ինչպես նաև մարզական բժշկության նպատակային ծրագրերի իրականացման գործում.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օժանդակում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնին դոպինգի դեմ պայքարի միջոցառումները իրականացնելիս.

գ) սահմանում է հանրակրթական ուսումնական հաստատությունների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման համար դպրոցականներին բժշկական համապատասխան խմբերի դասելու չափորոշիչը.

դ) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի հետ համատեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում է մարզիկների առողջական վիճակի նախնական և պարբերական բժշկական զննություններ.

ե) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի, աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի հետ աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներով զբաղվող մարզական հասարակական կազմակերպություններին:

Արդարադատության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը, համագործակցելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի հետ, մշակում է ֆիզկուլտուրային, առողջարարական ծրագրեր և ապահովում դրանց իրականացումը ազատազրկման վայրերում:

Կրթության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը՝

ա) կազմակերպում է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների, սովորողների ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության տվյալների ընդհանրացումն ու վերլուծումը: Ուսումնական հաստատությունում «Ֆիզիկական կուլտուրա» առարկան և արտադասարանական մարզական խմբում դասավանդող անձի մասնագիտական կրթությունը պարտադիր է.

բ) կազմակերպում է ուսումնական հաստատություններում մանուկների, երիտասարդների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական ունակությունների զարգացումը.

գ) կազմակերպում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի կատարելագործումն ու զարգացումը, ընդլայնում մանկապատանեկան մարզադպրոցների ցանցը.

դ) կազմակերպում է ազգային, միջազգային մարզական միջոցառումներ ու մրցումներ սովորողների համար.

ե) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի հետ մշակում և հաստատում է ուսումնական հաստատությունների արտաուսումնական մարզական խմբերի գործունեության կարգը.

զ) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի հետ համատեղ սահմանում է մարզական ուղղվածության դասարան ստեղծելու կարգը:

Պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը՝

ա) կազմակերպում է զինվորականների ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստականությունը.

բ) աջակցում է զինծառայող մարզիկներին մարզվելու և մրցումներին մասնակցելու համար, նպաստում ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականներում ընդգրկված ուժեղագույն մարզիկների մարզական վարպետության հետագա կատարելագործմանը մարզական վաշտում:

Աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը՝

ա) աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզկուլտուրայի և սպորտի ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքներին.

բ) կազմակերպում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում (մանկատուն, գիշերօթիկ դպրոց, տուն-ինտերնատ) ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու անհրաժեշտ պայմաններ:

Ոստիկանության և ազգային անվտանգության բնագավառների պետական կառավարման լիազորված մարմինները՝

ա) կազմակերպում են ոստիկանության և ազգային անվտանգության ծառայողների ընդհանուր և հատուկ մասնագիտական ֆիզիկական պատրաստվածությունը.

բ) աջակցում են իրենց լավագույն մարզիկներին մարզվելու և մրցումներին մասնակցելու համար.

գ) նպաստում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության զորքերում ժամկետային ծառայության մեջ գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականներում ընդգրկված ուժեղագույն մարզիկների մարզական վարպետության հետագա կատարելագործմանը՝ ըստ ծառայության վայրի:

(9.1-րդ հոդվածը լրաց. 10.06.09 ՀՕ-151-Ն, փոփ. 07.02.24 ՀՕ-53-Ն)

Հոդված 12. Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն (այսուհետ՝ ՀԱՕԿ) գլխավորում է օլիմպիական շարժումը երկրում:

Հայաստանի Հանրապետության Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի և օլիմպիական մարզաձևերի ազգային ֆեդերացիաների հետ ՀԱՕԿ-ը մշակում և իրագործում է բարձրագույն նվաճումների՝ սպորտի զարգացման միասնական քաղաքականությունը:

ՀԱՕԿ-ը գործում է Միջազգային օլիմպիական կոմիտեի խարտիային, իր կանոնադրությանը և Հայաստանի

Հանրապետության օրենքներին համապատասխան:

ՀԱՕԿ-ն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականների և մարզիկների մասնակցությունն օլիմպիական խաղերին ու Միջազգային օլիմպիական կոմիտեի հովանու ներքո անցկացվող մյուս միջոցառումներին:

Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականները և մարզիկներն օլիմպիական խաղերին և Միջազգային օլիմպիական կոմիտեի հովանու ներքո անցկացվող մրցումներին մասնակցում են Հայաստանի Հանրապետության պետական դրոշի ներքո:

Օլիմպիական շարժման և բարձրագույն նվաճումների՝ սպորտի զարգացման հարցերում ՀԱՕԿ-ը համադասում է հասարակական մարզական կազմակերպությունների աշխատանքները:

ՀԱՕԿ-ը մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացմամբ մշակում է օլիմպիական խաղերի նախապատրաստման քառամյա փուլային ծրագիրը:

ՀԱՕԿ-ը Միջազգային օլիմպիական կոմիտեի խորհրդանիշների, նշանաբանների պահապանն է մեր երկրում: Հայաստանի օլիմպիական խորհրդանիշները գովազդային կամ այլ նպատակներով կարող են օգտագործվել միայն ՀԱՕԿ-ի թույլտվությամբ և պայմաններով:

ՀԱՕԿ-ն իր առջև դրված խնդիրներն իրականացնում է պետական բյուջեի նպատակային հատկացումների, ֆինանսական սեփական միջոցների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրների հաշվին:

ՀԱՕԿ-ը, Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն, աջակցություն է ցուցաբերում Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպությանը սպորտում դոպինգի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին, ինչպես նաև պատասխանատու է սպորտում խտրականության և բռնության ցանկացած ձևի արտահայտման հակազդեցության համար՝ օլիմպիական խարտիայի և միջազգային չափորոշիչներին համապատասխան:

(12-րդ հոդվածը լրաց. 10.09.19 ՀՕ-160-Ն, խմբ. 01.03.23 ՀՕ-44-Ն)

Հոդված 13. Մարզաձևերի ազգային ֆեդերացիաները

Մարզաձևերի ազգային ֆեդերացիաները սպորտի առանձին տեսակը կամ տեսակները զարգացնելու նպատակով ստեղծված կազմակերպություններ են, որոնք կարող են ֆեդերացիա ճանաչվել, եթե՝

ա) մշակում և իրականացնում են մարզաձևերի զարգացման ծրագրեր, կազմակերպում են հանրապետական առաջնություններ, ուսանողական մարզական խաղեր, Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականներին և մարզիկներին նախապատրաստում են աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, համաշխարհային ունիվերսիադաներին և միջազգային մրցաշարերին մասնակցելու համար.

բ) քառամյա փուլային ծրագրով Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականներին նախապատրաստում են օլիմպիական խաղերին մասնակցելու համար.

գ) աջակցություն են ցուցաբերում Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպությանը՝ իրականացնելու Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով և միջազգային չափորոշիչներով ստանձնած իր պարտավորությունները:

Ֆեդերացիաները կարող են ընդգրկել մարզական ակումբներ, այլ մարզական հասարակական կազմակերպություններ, միություններ, ընկերություններ ու ակումբներ:

Ֆեդերացիաներում ընդգրկվող մարզական ակումբները կարող են մասնակցել ֆեդերացիաների կողմից կազմակերպվող մրցաշարերին:

(13-րդ հոդվածը խմբ. 10.09.19 ՀՕ-160-Ն, 01.03.23 ՀՕ-44-Ն)

Հոդված 16. Ֆիզկուլտուրային և մարզական կազմակերպությունների ֆինանսավորումը

Պետական բյուջեից ֆիզկուլտուրային և մարզական հասարակական կազմակերպությունների ֆինանսավորումն իրականացվում է պետական պատվերի տեղադրման, նպատակային ծրագրերի և դրամաշնորհների ձևով: Մարզերում մասնավոր կամ մասնավորի կողմից շահագործվող մարզաառողջարարական (ֆիթնես) մարզասրահների ու լողավազանների գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը կարող են դիմել և սահմանված չափորոշիչներին համապատասխանելու դեպքում ստանալ ֆինանսավորում պետության միջոցներից՝ կառավարության սահմանած կարգի համաձայն:

Ֆիզկուլտուրային և մարզական կազմակերպությունների ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները.

բ) սեփական միջոցները, որոնք գոյանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված գործունեության այլ ձևերից.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ միջոցները:

(16-րդ հոդվածը լրաց. 10.06.09 ՀՕ-151-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 4.1

(գլուխը լրաց. 10.09.19 ՀՕ-160-Ն)

~~ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄ~~ՀԱՎԱՔԱԿԱՆ*Ի ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԱՆԴԱՄՆԵՐԸ, ՄԱՐԶԻԿՆԵՐԸ*

Հոդված 18.1. Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքական**ի ձևավորումը**

Հայաստանի Հանրապետության ~~հավաքական թիմ~~հավաքականները (այսուհետ՝ ~~հավաքական թիմ~~հավաքական) ձևավորում են համապատասխան մարզաձևերի ազգային ֆեդերացիաները:

Հոդված 18.2. ~~Հավաքական թիմ~~Հավաքական**ի հիմնական նպատակները**

~~Հավաքական թիմ~~Հավաքական**ի** հիմնական նպատակներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության հեղինակության ամրապնդման համար համաշխարհային մրցասպարեզներում, օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում մրցանակային տեղեր գրավելը և Հայաստանի Հանրապետության դրոշը բարձրացնելը.

բ) Հայաստանի Հանրապետությունում սպորտի զարգացմանը և օլիմպիական գաղափարների տարածմանը, մարզաձևերի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչությանը նպաստելը.

գ) ժողովուրդների միջև բարեկամության և համագործակցության ամրապնդմանը նպաստելը:

Հոդված 18.3. ~~Հավաքական թիմ~~Հավաքական**ի հիմնական խնդիրը**

~~Հավաքական թիմ~~Հավաքական**ի** հիմնական խնդիրն է առաջատար մարզիկների մարզական վարպետության կատարելագործումը, նրանց համալիր նախապատրաստումը օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին:

Հոդված 18.4. ~~Հավաքական թիմ~~Հավաքական**ի կազմի սահմանումը**

~~Հավաքական թիմ~~Հավաքական**ի** թեկնածուների առավելագույն թվակազմը սահմանում է համապատասխան մարզաձևի ազգային ֆեդերացիան՝ ելնելով մարզաձևերի միջազգային ֆեդերացիաների հաստատած կանոնակարգերից, Հայաստանի Հանրապետությունում տվյալ մարզաձևի զարգացման մակարդակից ու տարվա գլխավոր մրցաշարերում մարզիկների մասնակցության արդյունքներից:

Հոդված 18.5. Օլիմպիական ~~հավաքական թիմ~~հավաքական**ի ձևավորումը**

Օլիմպիական մարզաձևերի մեծահասակների ~~հավաքական թիմ~~հավաքական**ի** հիմնական կազմի բոլոր անդամները համարվում են օլիմպիական ~~հավաքական թիմ~~հավաքական**ի** թեկնածուներ (ՕՀԹԹ):

Համապատասխան մարզաձևերի ֆեդերացիաների ներկայացմամբ օլիմպիական խաղերի ուղեգիր ձեռք բերած մարզիկների ցանկը և օլիմպիական ~~հավաքական թիմ~~հավաքական**ի** մարզիչների կազմը հաստատում է ՀԱՕԿ-ը՝ օլիմպիական խաղերին մասնակցելու համար:

Օլիմպիական խաղերի ուղեգիր ձեռք բերած մարզիկները համարվում են օլիմպիական ~~հավաքական թիմ~~հավաքական**ի** անդամներ:

Հոդված 18.6. ~~Հավաքական թիմ~~Հավաքական**ի կազմում ընդգրկված մարզիկների իրավունքներն ու պարտականությունները**

~~Հավաքական թիմ~~Հավաքական**ի** կազմում ընդգրկված մարզիկները, մարզիչները և սպասարկող անձնակազմը

մարզաձևերի համապատասխան ազգային ֆեդերացիաների հետ կարող են կնքել երկկողմ պայմանագրեր:

~~Հավաքական թիմ~~Հավաքականի կազմում ընդգրկված մարզիկներն իրավունք ունեն՝

ա) ուսումնամարզական հավաքներին և միջազգային միջոցառումներին մասնակցելու ժամանակահատվածում ստանալու օրապահիկ, գիշերավարձ, մարզական համազգեստ և հանդերձանք.

բ) օգտվելու ազգային մարզական կենտրոններ (անկախ դրանց սեփականության ձևից) համարվող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ֆիզկուլտուրային-առողջարարական կառույցներից.

գ) օգտվելու պետական գիտական կենտրոնների, գիտահետազոտական ինստիտուտների, լաբորատորիաների և ուսումնական հաստատությունների փորձակոնստրուկտորական, տեխնոլոգիական և այլ գիտահետազոտական հաստատությունների գիտական բժշկակենսաբանական ու տեխնիկական նվաճումներից.

դ) հիվանդությունների, վնասվածքների դեպքում ստանալու բժշկական օգնություն և սպասարկում բժշկական կազմակերպություններում, շարունակական (դիսպանսերային) հսկողության ծառայություն իրականացնող հաստատություններում՝ հնարավորության դեպքում բժշկական անձնակազմին մշտապես տեղեկացնելով արգելված նյութեր և արգելված մեթոդներ չօգտագործելու պարտավորության մասին, իսկ պարտադիր բուժում նշանակվելու դեպքում օգտվելու թերապևտիկ օգտագործման թույլտվություն ստանալու՝ Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով սահմանված իրավունքից.

ե) օգտվելու պետական բյուջեի, ՀԱՕԿ-ի, մարզաձևերի ֆեդերացիաների և օրենքով չարգելված այլ միջոցներով ձեռք բերված ժամանակակից նյութատեխնիկական հանդերձանքից (մարզագույք, մարզահագուստ և այլն).

զ) արժանանալու մարզական կոչումների՝ «Հայաստանի Հանրապետության սպորտի վարպետ», «Հայաստանի Հանրապետության միջազգային կարգի սպորտի վարպետ», «Հայաստանի Հանրապետության սպորտի վաստակավոր վարպետ», ինչպես նաև ներկայացվելու պարգևատրման՝ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի և ՀԱՕԿ-ի դիպլոմներով ու պատվոգրերով, կառավարական պարգևներով՝ օլիմպիական խաղերում, աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում մարզական բարձրագույն նվաճումների հասնելու, համապատասխան մարզաձևի զարգացման գործում մեծ ներդրում ունենալու համար.

է) մարզումներին, մարզական հավաքներին և միջազգային միջոցառումներին մասնակցելու ժամանակ ապահովագրված լինելու դժբախտ պատահարների պատճառած վնասներից.

ը) մասնակցելու անհատական պլանով նախապատրաստման նախագծերի ծրագրմանը, մշակմանն ու վերլուծությանը:

Սույն հոդվածով նախատեսված իրավունքների իրականացման համապատասխան կարգերը լիազորված մարմնի ներկայացմամբ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

~~Հավաքական թիմ~~Հավաքականի կազմում ընդգրկված մարզիկները պարտավոր են՝

ա) հանդես գալով Հայաստանի Հանրապետության պետական դրոշի ներքո՝ արժանապատվորեն ներկայացնել Հայաստանը միջազգային մրցասպարեզներում՝ օլիմպիական խաղերում, աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում, միջազգային այլ մրցաշարերում և իրենց նվաճումներով ամրապնդել հայրենիքի մարզական փառքը.

բ) դրսևորել քաղաքացիական դիրքորոշում, բարոյակամային բարձր հատկանիշներ, տիրապետել ֆիզկուլտուրային և սպորտին, օլիմպիական և միջազգային մարզական շարժմանը վերաբերող գիտելիքներին.

գ) անձնական օրինակով նպաստել ~~հավաքական թիմ~~հավաքականում համերաշխության, ընկերական մթնոլորտի, ազնիվ մրցակցության գաղափարների սերմանմանը, հարգալից վերաբերմունքի ձևավորմանը ~~հավաքական թիմ~~հավաքականի ղեկավարության, սպասարկող անձնակազմի, մրցավարների և երկրպագուների նկատմամբ.

դ) բարեխղճորեն և ստեղծագործաբար կատարել ~~հավաքական թիմ~~հավաքականի ղեկավարության հրահանգները, մարզչական կազմի պահանջներն ու խորհուրդները.

ե) տեղեկացված լինել և հետևել արգելված նյութերի և մեթոդների օգտագործման պահանջներին և հակադոպինգային կանոններին, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն.

զ) պահպանել համակեցության նորմերը, հասարակական կարգ ու կանոնը.

է) խնամքով վերաբերվել մարզահագուստին, գույքին, հանդերձանքին, սարքավորումներին և մարզական այլ պարագաներին.

ը) ապահովել Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի, ՀԱՕԿ-ի, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և հովանավոր կազմակերպությունների հետ կնքված պայմանագրի պահանջները:

Աշխատանքային կարգապահության խախտումների դեպքում ~~հավաքական թիմ~~հավաքականի մարզիկ-անդամների նկատմամբ կիրառվում է աշխատանքային պայմանագրով նախատեսված կարգապահական տույժ:

(18.6-րդ հոդվածը խմբ. 01.03.23 ՀՕ-44-Ն)

Հոդված 18.7. ~~Հավաքական թիմ~~Հավաքականի մարզիչների և մասնագետների իրավունքներն ու պարտականությունները

~~Հավաքական թիմ~~Հավաքականի մարզիչներն ու մասնագետները պետք է ունենան համապատասխան մասնագիտական բարձրագույն կրթություն, հինգ տարուց ոչ պակաս գործնական աշխատանքի փորձ: Նրանք նշանակվում են համապատասխան մարզաձևերի ազգային ֆեդերացիաների կողմից:

~~Հավաքական թիմ~~Հավաքականի մարզիչներն ու մասնագետները պարտավոր են հետևել հակադոպինգային կանոններին, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն:

~~Հավաքական թիմ~~Հավաքականի մարզիչներն ու մասնագետները իրավունք ունեն՝

ա) ստանալու աշխատավարձ, դրամական պարգև, պատվովճար, պարգևատրում, թոշակ, խրախուսման այլ ձևեր՝ օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում մարզիկների ցուցաբերած մարզական բարձր արդյունքների համար.

բ) ներկայացվելու պետական պարգևների՝ օլիմպիական խաղերում, աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում, շախմատի օլիմպիադաներում մարզիկների և նրանց մարզիչների ցուցաբերած բարձր նվաճումների համար:

~~Հավաքական թիմ~~Հավաքականի մարզիչների ու մասնագետների՝ սույն հոդվածով նախատեսված իրավունքների իրականացման համապատասխան կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

~~Հավաքական թիմ~~Հավաքականի մարզիչներն ու մասնագետները պարտավոր են՝

ա) ապահովել ուսումնամարզական գործընթացի ժամանակակից մեթոդական և կազմակերպչական մակարդակը, օպերատիվ ու հեռանկարային պլանավորումը՝ միջազգային միջոցառումներին նախապատրաստման և մասնակցության անցած փուլերի վերլուծության հիման վրա.

բ) ~~հավաքական թիմ~~հավաքանում ստեղծել ընկերական ու գործնական մրցակցության մթնոլորտ, ապահովել հարգալից վերաբերմունքի դրսևորում ~~հավաքական թիմ~~հավաքականի սպասարկող անձնակազմի, մրցավարների և երկրպագուների նկատմամբ.

գ) հասնել հայկական սպորտի հեղինակության ամրապնդմանը միջազգային մրցասպարեզում.

դ) արժանապատվորեն ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը օլիմպիական խաղերում, աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում և միջազգային այլ միջոցառումներում:

(18.7-րդ հոդվածը լրաց. 01.03.23 ՀՕ-44-Ն, փոփ. 28.02.24 ՀՕ-123-Ն)

Հոդված 18. 8. ~~Հավաքական թիմ~~Հավաքականի ղեկավարումը

~~Հավաքական թիմ~~Հավաքականի ղեկավարումը միանձնյա ղեկավարության իրավունքով իրականացնում է գլխավոր (ավագ) մարզիչը՝ ~~հավաքական թիմ~~հավաքականի մյուս մարզիչների հետ, որոնք պատասխանատու են թիմի անդամների՝ մրցաշարերին նախապատրաստման մակարդակի և մրցելույթների արդյունքների, համալիր նպատակային ծրագրերի իրագործման, ուսումնամարզական հավաքների անցկացման, դաստիարակչական աշխատանքների և թիմում տիրող հոգեբանական մթնոլորտի համար:

Գլխավոր մարզիչը ղեկավարում է ~~հավաքական թիմ~~հավաքականի խորհուրդը:

Ըստ մարզաձևի խմբերի և առանձին ենթամարզաձևերի (ճյուղերի) մարզիչները մարզիկների անձնական մարզիչների հետ համատեղ մարզիկների՝ մրցաշարերին նախապատրաստման համալիր նպատակային ծրագրերի հիման վրա մշակում և իրականացնում են մարզիկների անհատական նախապատրաստման պլանները (ծրագրերը), անմիջականորեն մասնակցում են մարզումային գործընթացին:

Հոդված 18.9. ~~Հավաքական թիմ~~Հավաքականների մասնագետները

~~Հավաքական թիմ~~Հավաքականի բժիշկները հետևում են մարզիկների առողջությանը, անհրաժեշտության դեպքում իրականացնում են նրանց բուժումն ու վերականգնումը, ինչպես նաև հսկողության տակ են առնում մարզիկների հաշվեկշռված սնունդն ու այն վայրերի սանիտարահիգիենիկ պայմանները, որտեղ ընթանում է ուսումնամարզական գործընթացը:

~~Հավաքական թիմ~~Հավաքականի բժիշկները պարտավոր են հետևել հակադոպինգային կանոններին, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն:

~~Հավաքական թիմ~~Հավաքականի մերսողները ենթարկվում են թիմի բժշկին, ապահովում են մարզիկների վերականգնումը, անցկացնում են ֆիզիոթերապևտիկ մեթոդներով պրոցեդուրաներ: ~~Հավաքական թիմ~~Հավաքականներին սպասարկող գիտական խմբերի մասնագետները աշխատում են ~~հավաքական թիմ~~հավաքականի գլխավոր (ավագ) մարզչի ղեկավարությամբ, իրականացնում են նրանց նախապատրաստվածության ֆունկցիոնալ վիճակի ու տեխնիկական մակարդակի ընթացիկ և համալիր վերահսկողություն, մարզչական կազմի հետ համատեղ մշակում են մարզիկների՝ մրցաշարերին նախապատրաստման համալիր նպատակային ծրագրերը:

~~Հավաքական թիմ~~Հավաքականների մյուս մասնագետները (մեխանիկները, ճիապանները և այլն) իրենց

աշխատանքը կատարում են համապատասխան ազգային ֆեդերացիաների հաստատած պաշտոնական հրահանգների համաձայն:

(18.9-րդ հոդվածը լրաց. 01.03.23 ՀՕ-44-Ն)

Հոդված 18.10. ~~Հավաքական թիմ~~Հավաքականի **նյութատեխնիկական և ֆինանսական ապահովվածությունը**

~~Հավաքական թիմ~~Հավաքականների նախապատրաստումը և օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, միջազգային այլ մրցաշարերին մասնակցությունը (այդ թվում՝ նրանց նյութատեխնիկական ապահովվածությունը) իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ պետական բյուջեի միջոցների, ինչպես նաև ՀԱՕԿ-ի, համապատասխան մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: